

Թիւ 26681

Տետրուար 1, 1980

Հոգեշնորհ
Տ. Վազգէն ծ. Վրդ. Լէշիշեան
Առաջնորդի Օրինորդ Գանատայի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Սկստի առինք Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ Ծխական
Խորհուրդի 1979 Դեկտեմբեր 27 թուակիր նամակը, զոր
մեզի յանձնեցիք 1980 Յունուար 17ին Մոնթրէալի մէջ:

Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին
խնդրանքին կարելի է ընդառաջել հետեւեալ կարգադրու-
թիւնը քննելով:

1. Բանի որ Տ. Յուսիկ Լհնյ. Նշանեան Գանատայի
մէջ կը բնակի, կրնար զայն նշանակել հովիւ Ս. Խաչ
Եկեղեցւոյ համայնքին, կատարելու համար կրօնական
բոլոր պարտականութիւնները ձեր հսկողութեան ներքեւ
եւ ենթակայ Առաջնորդի իշխանութեան:

2. Ծխական Խորհուրդին, ձեր եւ Տ. Յուսիկ Լահա-
նայի համաձայնութեամբ Ծխական Խորհուրդը Տ. Յուսիկ
Լահանային կը վճարէ ամսական վեց հարիւր զանաւան
տուար, առաւել ամսական երկու հարիւր տուար իրրեւ
տան վարձք, որ ենթակայ պիտի ըլլայ փոփոխութեան՝ ըստ
կենցաղային պահանջից:

3. Առաջին երկու ամսուան վճարումները կանխաւ Ծր-
խական Խորհուրդը պէտք է փոխանցէ ձեզի եւ դուր Առաջ-
նորդի Օրինորդի ձեր հանգամանքով դրամատան մէջ հաշիւ
մը կը լսնար՝ Տ. Յուսիկ Լահանայի ամսական վճարումնե-
րը կատարելու համար: Ամէն ամսու առաջին շաբաթուան

ընթացքին ծխական Խորհուրդը պարտի նշանակուած գումարները Առաջնորդի Փոխանորդին փոխանցել:

4. Տ. Յուսիկ Լահանային պէտք է տրուի նաեւ սարեկան երկու շաբաթ վճարովի արձակուրդ, երկու Կիրակի բացակայելու իրաւունքով:

Ուրախ պիտի ըլլանք եթէ վերոյիշեալ կարգադրութիւնը կատարէք Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին եւ Տ. Յուսիկ Քոնյ. նշանեանի հետ: Հաճեցէք մեզի ներկայացնել ձեր վերջնական գրաւոր համաձայնութիւնը՝ որպէս զի պաշտօնապէս զայն հաստատենք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԹԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ